ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2020թվականի N 27

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դարպաս համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

Որոշում եմ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 28

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով՝
Որոշում եմ.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող 1.59593 հա մակերեսով / ծածկագիր՝ 06-033-0232-0007 / գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ այլ հողատեսքերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի, փոխադրել գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքի՝ որպես 4-րդ կարգի խոտհարք:
2.Համայնքային հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:
3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՐՏԻ 2020թվականի N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ» ԴԵՊՔԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲ» ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշման հավելվածի 6-րդ գլխի պահանջներով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 18.03.2020թ. թիվ 01/107.4/02528-2020 գրությունը՝
Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Լոռու մարզի Դարպաս համայնքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամներից ձևավորել կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման համայնքային շտաբ:
2.Հաստատել շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված 1.
Դարպաս համայնքի ղեկավարի
2020թ. մարտի 19-ի թիվ 29 -Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՏԱԲԻ

Ա.Ալոյան - շտաբի պետ, Դարաս համայնքի ղեկավար
Ա.Աբրահամյան - շտաբի պետի տեղակալ, աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
Շտաբի անդամներ.
Դ.Վարդանյան - աշխատակազմի քարտուղար
Ա.Վարդանյան - առաջատար մասնագետ-հաշվապահ
Լ.Առաքելյան - երկրորդ կարգի մասնագետ
Բ.Պապիկյան - վարորդ
Մ.Պետրոսյան - Գուգարքի ԿՊ ՓԲԸ-ի, բուժ քույր
Ս.Թովմասյան - «Դարպաս համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ- ի տնօրեն
Ա.Տեր-Մակարովա - «Կրթամարզամշակույթային համալիր» ՀՈԱԿ-ի տնօրեն
Հ.Աթոյան - ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի տեսուչ,
ոստիկանության լեյտենանտ
Ա.Ասլանյան - ավագանի
Կ.Կիրակոսյան - ավագանի

Դարպաս համայնքի ղեկավար՝ Ա.Ալոյան